

Աղբիւրի յաւելուած

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 2 չորեքշաբթի 12 յունուարի | ութերորդ տարի 1897

ԹԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Արթին փաշա Տատեան

Տատեան տոհմը շատ տարիներից ի վեր վայելում է Տաճկաստանում բարի անուն։ Նրանք մեծ յարգի են եղել և են մինչև այժմ թէ սուլթանների և թէ հայ ազգի առաջ։ Յատուկ ամեն արիստոկրատի՝ սրանք իրանց խաղաղասիրութեամբ զանազան պատահական փոթորկալից րոպէներում դրական մասնակցութիւն չեն ցոյց տւել ճգնաժամերում և կամ այսուհայն պատմական, աշխարհագրական հարցեր վճռելու մէջ։ Նրանք, դարերից ի վեր հայի յատուկ հաւատարմութեամբ ծառայել են իրանց արքաներին, երբէք դաւաճանութեան ամենաթոյլ անգամ առիթ տալու։ Սակայն և նրանք երբէք չեն դաւաճանել իրանց հայրենիքին և ազգի իրաւունքներին ու շահերին։ Տատեանները բուն Վանեցիք են, Արծրունիների շառաւիղ։ Նրանց տոհմաբանութեան մասին ընդարձակ գրութիւն կայ մի ձեռագիր Աստւածաշնչի մէջ, որ այժմ Պարիզի ազգային մատենադարանում է։

Նշանաւոր Պօղոս-Բէյ Տատեանը մի պահապան հրեշտակ է եղել տաճկահայերի համար։ Վայելելով սուլթան Մէջիդի անկեղծ սէրն ու հաւատարմութիւնը, նա կարողացել էր հայերի համար ձեռք բերել մի շարք արտօնութիւններ։ Կ. Պոլսի հիւանդանոցի համար մինչև այժմ էլ կառավարութիւնն էր միս մատակարարում համաձայն Պօղոս-Բէյի կտակի։ Սուլթան Մէջիդը քանիցս անգամ օրերով հիւր է մնացել Սան-Ստեփանոյում (Տատեանների դիւղը, ուր գտնւում է և նրանց փառաւոր ապարանքը)՝ Պօղոս-Բէյին։ Հայասէր այդ սուլթանի անձնական սեղանի հացը համարեա միշտ թխւում է եղել Պօղոս-Բէյի տանը և նրանք են արքայական սեղանին ամեն օր հաց նւէր բերել։

Պատմում են, որ մի անգամ երբ աղ-

Արթին փաշա Տատեան.

(տանկաց wrs. գործ. միհիտեի օգնական).

դի սիրեցեալ Հայրիկը երիտասարդ հասակում մոռանալով, որ Կ. Պոլսում Պերայի եկեղեցումն է իր հայրենասէր քարոզը խօսում, այնքան առաջ էր գնացել իր յորդորի մէջ, որ Պօղոս-Բէյ, պուճէ ակամայ, եկեղեցու դասից ստիպւած է եղել հայրենասէր քարոզչին հրաւիրել ընդհատելու քարոզը։

Տատեան ընտանիքը սերտ կապեր և ազգակցութիւն ունի Եւրոպայում դիպլօմատիայի հետ։ Վիեննայի և Հռոմի պարսից դեսպան Նարիման-խանի, Լոնդոնի նախկին դեսպան Մելքոմ-խանի, Աւստրիայում Սուջարա իշխանի, Նուբար-փաշայի ամուսինները Տատեան տոհմից են։

Սան-Ստեփանոյի դաշնագրի 16 յօդւածը իշխանազնուհի Էլմնիցա Տատեանի միջնորդութեամբ գրւեց։ Այժմ էլ այդ իշխանուհին, որ դիպլօմատ Սուջարայի ամուսինն է Աւստրո-Ունգարիայում, մենք քաջ գիտենք, կոմս Գոլուխովսկու միջոցով շատ է աշխատում թշւառ հայրենիքի համար։

Տատեան Պօղոս-Բէյի գաւակները և թոռները մեր Կովկասում էլ յայտնի են իրանց ազնիւ զգացումներով։ Իշխանուհի Մագթաղինէ Պօղոս-Բէյեանը, որ Կովկասի նշանաւոր հերոս Բարսեղ Բէհբուտեանի հարսն է, իր հիւանդ Իշխան ամուսին գեներալ Նիկոլային համարեա նորահարս օրից մինչև այսօր պահպանում է հինգերորդ դարու փափկասուն տիկինների նման։ Սրա եղբայրը, Մկրտիչ Բէյ Տատեանը, որ երկար տարիներից ի վեր բնակւում է Պարիզում և ընդունել Ֆրանսիայի հպատակութիւն, այժմ համարեա բացառապէս նւիրւած է գրականութեան։

Արթին փաշա Տատեանի մասին աւելորդ ենք համարում առայժմ մանրամասն կենսագրական տեղեկութիւններ հաղորդել, այլ շատանում ենք միայն թռուցիկ կերպով տալով քարակտերիստիկ այն տոհմին, որին պատկանում է և Արթին-փաշան։ Սա նոյնպէս ընթանում է խաղաղասէր շաւղով և կարծէք թէ թելադրում է թշւառ հային համբերել, կրել դառն ճակատագիրը և Աստծունը Աստծուն տալ, իսկ Կայսրինը Կայսեր։

ԱՐՏԱՇԷՍ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I

Դարեր շատ առաջ,
Երբ աշխարհը լի էր հրաշքներով,
Երբ մարդը մոլի, անկեղծ հաւատով
Դաւանում էր չարը և բարին,
Երբ նա օրհներգը գըտնում էր միակ
Անսպառ աղբիւր բախտաւորութեան,
Անէծքների մէջ անաչառ մի կամք,
Կամքը Աստուծոյ վրէժխնդրութեան,—
Ծագեց մի աստղ:
Եւ Գողթան երգիչք հոգով ներշնչեաց,
Հիւսեցին երգեր—երգ նւիրական,
Եւ տաւիղ, քնար, բամբիռը առած՝
Թռթռուն լարերի մեղեդիներով
Տարան սիրեցին աշխարհը համայն
Ստեղծագործեաց անպիղծ բերանով:

Արտաշէս երկրորդ, ահա մի պարծանք,
Որին իր գարը ծնեց եզակի,
Որը և՛ վայելք և՛ վիշտ և՛ տանջանք՝
Ճաշակեց ցմահ նա փոփոխակի:
Նախանձախնդիր նա իր աշխարհին
Բերեց իր ազգին փառաւոր վիճակ,
Եւ դաշտն ու հովիտ պերճ Հայաստանի
Մշակեց որպէս պարտէզը միակ:
Բայց փոքրոգիկը դառը կեանքի,
Անծանօթ չէին նրա հէգ սրտին,
Եւ պատուղները անմեղ վայելքի
Չէին մշտական նրա սոսկ բաժին:
Եւ մինչ մահամերձ արքան զայրացած
Անէծք էր դոչում իր որդու գլխին,
Արհաւիրքների քաջերը Մասեաց
Գերեցին նրբա Արտաւազդ որդին:
Եւ դարեր անցան.
Զրքաւեց խսպառ մինչ այսօր սակայն
Որդին Արտաւազդ մեղքերը դաժան.
Տակաւին նրբա վիշտը անսպառ
Տառապում է նա անվերջ անվախճան:

Եւ դարեր անցան,
Պարբնոցի միջից մինչ այսօր սակայն
Անէծք են կարդում,
Նզովքներ թափում
Մեղսոտ անարդար
Արքայի համար:

II

Հոսում է կուրը, բայց սովորական
Երերմունքը և ընթացքն անմեղի
Էլ չեն նկատում նրբա սոսկական
Կոհակների մէջ փրփրուն, կատաղի.
Հոսում է շտապ, հոսում է արագ
Մերթ մռնչալով, մերթ գալարելով.
Եւ նրա ուժգին հարւածների տակ
Պղտորւում յատակն աւազի դոյնով:
Գոռում է կուրը, փախչում ափերից,
Յառաջ է մղում հոսանքը ուժգին,
Որ ականատես չըլինի նորից՝
Մարդկային կուռի ահեղ չարիքին:

—

Դրել են բանակ երկու ափերում,
Երկու ախոյեան ահարկու դնդեր.
Վրէժխնդիր հոգով առիթ են փնտռում
Յառաջ բերելու կոտորած, աւեր:
Եւ ամեն անգամ և ամենայն ժամ
Նրբանք կռւում են կռիւը նորոգում,
Բայց բախտն անմեկին,
Բախտը տակաւին
Չէ տալիս բնաւ որոշում կռւին:

III

Ընդհանուր թախիծ ու սուգ է տիրել
Ալանաց ահեղ զօրաբանակում.
Սգում է արքան. դառնապէս ողբում
Արքայադուստր Սաթենիկն տրտում:
Արքայի միակ սիրելի որդին
Գերի է ընկել թշնամու ձեռքում,
Եւ քաջն Արտաշէս այդ մանուկ գերին
Հաշտութեան գնով էլ չէ արձակում:
Ոչ մեծ վիրկանքը, ոչ էլ թանգ ընծան
Չեն վախարինում վճիռը պետի,
Եւ Ալանների սուգը ու կսկծան
Բնաւ չեն շիջում ցասումը սրտի:
Այլ մի խօսք միայն, մի ժպիտ կուսի,
Որ պիտի ցօղէ դուստրերը Ալան
Յաչս գերեվար քաջ Արտաշէսի,

Եւ այդ է միակ փրկանքը մանկան։
«Եթէ այդ լինի ծանր պայմանով
«Արքունիների վեհ պատւի գնով,
«Պիտի ես փրկեմ եղբօրս նորից»,
Լուեց Ալանայ դստեր բերանից։
Եւ նա ճեպընթաց, հերարձակ կերպով
Գետափը եկաւ, որպէս դիցուհի
Եւ աղերսագին յանդիման ոճով
Խօսեց վեհօրէն դիմացն արքայի.
«Քեզ ասեմ, դիւցազն, վայել չէ քաջին
Գերել, չարչարել մանուկ արքային,
Եւ յարուցանել թշնամունք անվերջ
Երկու ազգերի խաղաղ կեանքի մէջ։
Եկ, համաձայնիր թողնելու մանկան,
Ընդունիր ձեռքս իմ եղբօր փոխան.
Թող իմ խօսքերը լինին փրկութեան
Իմ անմեղ եղբօր հէգ կեանքի համար,
Եւ ես էլ լինեմ սուրբ խաղաղութեան
Դրաւականը տարիներ երկար»։

IV

Գերեց արքային կոյսը Ալանայ
Իր լմաստալի քնքոյշ խօսքերով,
Եւ արքան հայոց խոր յափշտակած
Անխօս նայում էր նա լռին կերպով։
Կանգնած էր նրբա առաջին մի կոյս,
Մի կոյս աննման,
Մի կոյս հերարձակ.
Նման էր լուսնին պայծառ գիշերւայ,
Որպէս լուսնթագ նազելի էր նա։
Նրբա դեղանի աչեր սևորակ,
Վարդագոյն այտեր, կուրծքը հոլանի,
Քնքոյշ ձեռքերը, յարմարին հասակ,
Արքայի սրտում վառեցին կրակ։
Եւ արքան մինչդեռ բնաւ չէր ուղում
Հաշտութեան գնով ազատել գերին,
Եւ խրոխտաբար սուրը իր ձեռքում
Պատրաստ էր կռւել, կռւել տակաւին,
Նա այդ դեղանի, այդ կոյսի առաջ
Փափկեց, մեղմացաւ Արտաշէսը քաջ,
Եւ նրբա սրտում, սրտում առնական
Կոթող կանգնեցրեց սէրը յաղթական։

Ապա Արտաշէս կանչեց բանիմաց
Սմբատ աստղետին, վճռաբար ասաց.
«Թող դադրէ կռիւն և կոյսն Ալանայ
«Թող լինի դարձն իմ վեհ արքունեայ»։

V

Եւ ուստի տածէ քաջն Արտաշէս
Հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրոց
Ընդ քաջազգոյ կոյս օրիորդին Ալանայ։
Խոր. գր. երկ. գլ. ծ.

Տեսնելով Սմբատ լուծը արքայի,
Ուղարկեց փութով պատւաւոր խօսնակ.
Խնդրելով ձեռքը դեղանի կոյսի,
Որպէս հաշտութեան պայմանը միակ։
Իբրև սովորութի, յատուկ այդ դարու,
Փեսան պիտ բերէր, որպէս գլխագին,
Օղեր, ապարանջ, վզնոց իր հարսին,
Ոսկի ու արծաթ ընծայ թանկագին։
Սակայն Սաթենիկն՝ դստեր արքայի,
Զքնաղը կանանց, պարծանքը ազգի,
Ո՞վ կարող է բերել նրբա գլխագին,
Անթիւ, անհամար արծաթ և ոսկի։
Եւ այսպէս ահա արքան Ալանայ
Խորհուրդ կանչելով, որ առանց դրան
Արատ սիրտ բերէր թագին փառապանծ,
Անվերջ ամօթանք իր զօրեղ անուան.
Տւեց պատասխան համարձակ այսպէս,
Արքունի հայոց հարանախօսներին.
«Որտեղից կրտայ քաջն Արտաշէս,
Հազար հազարներ բիւրաւոր ոսկին»։

VI

Սակայն վայել չէր հայոց արքային
Բերել արծաթի գնով իրան կին,
Եւ այդ վաճառքով նաև մի ստեր
Իր բազկին, ուժին, իր անհուն պատին.
Այլ նա քաջի պէս, հերոսի նման
Պիտ առևանգէր դեղանին Ալան,
Որ դատը մարդկանց, բազմութեան վճռով
Համարւէր արքան արժանի նրբան։
Եւ մնաց ոսկին որպէս անվայել
Մի ստոր միջոց սուրբ ամուսնութեան,
Իսկ այն, որ պիտի լինէր թագուհի,
Նա պիտի բերւէր ուժով քաջութեան։

—

Հեծաւ Արտաշէս ի սեաւն դեղեցիկ
Պաճուճած պատած ոսկի ասպարով,
Սլացաւ մուտ, որպէս արծըւիվ,
Բանակն թշնամու սրընթաց կերպով։
Ճօճեց ու ձգեց շիկափոկ պարանն,
Եւ շատ ցաւեցոյց մէջքը կուսական,
Եւ որսաց որպէս անմեղ ճնճղուկին

կարպագեն կանայք.

Փորագր. *Բրէնդամուրի.*

Յափշտակում է բազէնը ուժգին։
Պոռոտները գործեց ուժով փոթորկի,
Ֆարշեց նա կոյսին՝ ետ սեաւլ զաւակ.
Եւ պատառելով ընթացքը գետի,
Զքնաղ աւարով Հասաւ իր բանակ։

VII

Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի.
Տեղայր մարգարիտ ի հարսնութեանն Սաթենկան։

Խոր. գր։ երկ. գլ. ծ.

Թողած կուռի դաշտ, արքան բանիբուն
Գալիս է ահա մեծ յաղթանակով,
Եւ որպէս արէգ նըրա հարսնացուն
Գալիս է զուգած, զարդարուած ոսկով։
Խնջոյք փառաւոր շքեղ հարսանեաց
Տօնում է ահա պերճ արքունիքում,
Եւ իբը սովորոյթ երջանիկ նախնեաց
Տօնում են նըրանք՝ ոսկի շռայլում։
Մարգարիտները անվերջ, անխնայ
Ձաղ ի շաղ տալի նոր հարսի վրայ։

VIII

Եւ զաղար առած պատերազմներից
Մտածեց արքան.
«Բաւ է, թող մտնի սուրը իր պատեան,
Եւ ժողովուրդըս ազատ հոգսերից
Թող ծաղկեցնէ երկիրը խոպան»։
Եւ արդ ամեն տեղ դաշտեր ու հովիտ
Անտառ, լեռ ու ձոր, կանանչ ու վճիտ
Փռում են անվերջ նաղելով մեղմիկ,
Որպէս ծովակի մանկական ալիք։
Եւ ամեն մի վայր, անկիւնը յետին
Այդ գողտրիկ երկրի, գողտրիկ աշխարհի
Մշակւեց, ծաղկեց, որպէս ճեմելին
Արևելաբնակ հարուստ իշխանի.
Այնտեղ դաշտերում, երբեմն գեղանի,
Երբեմն փայլում են ջրանցքները փոքրիկ,
Եւ հեռուն, հեռուն ծովը ծիրանի,
Փռում է անվերջ ափերում մեղմիկ։
Նաւերը, ահա, չափում են նորէն
Ծովի, գետերի մակարթներ փոթոր,
Եւ ուղիները, որպէս ժապաւէն՝
Ձգւած են դաշտի, լեռների միջով։
Գիտութիւնն անհուն, արհեստներ փարթամ,
Եռում են յետին անկիւնում անդամ,
Եւ արդարութեամբ մարդկիկ վաստակած
Վայելում են միշտ վաստակը իւրեանց։
Եւ փոթորիկը անհուն վշտերի,
Գեռ չէ թափանցել հոգին մարդերի,
Այլ սէր, սէր միայն ամենքի սրտում
Եւ չէ վրդովւել կեանքը անտրտում։

(Կըշարունակի)

ԿԵՍՆՔԻ ԿԼՕՈՒՆՆԵՐ

I

Ես ծիծաղել եմ ուզում, օ Մօմուս. տուր ինձ հնարհք և կարողութիւն, որ մի կուշտ ծիծաղեմ ու սիրտս հովացնեմ. կեանքի այս դառն ժամերին խորհուրդ կըտամ իմ ընթերցողներին, որ նրանք էլ հետևեն իմ բարի օրինակին, որովհետև միայն ծիծաղն է, որ մեզ առ ժամանակ մոռացնել է տալիս տաղտուկ ներկան։ Ծիծաղելու համար մէկ էլ նեղութիւն չը քաշէք գնալու Նիկիտինի՝ ցիրկը, որովհետև կլօուննները ամեն օր մեզ հետ են ամեն տեղ։ Թէպէտ մեր հայկական ահաղին քթերից շատերը թամքած են պէնսնէով, բայց մենք, տարաբախտաբար չենք կարողանում նկատել մեր քթի տակ վխտող կլօուններին։ Օրինակ, մեղանից ով հոգուն մեղք կ'աւելացնէր և կ'ասէր, որ Դերասիմ Եակուլիչ Դանբուլովը կլօուն է?—Ոչ ոք, որովհետև այդ մարդը մարդամիջի մի մարդ է, անուն ունի, փող ունի... Խեղճը ինչով է կլօուն? Առաւօտները շուտ զարթնում է նա, հագնում իր շորերը, իր ընտանիքի հետ քաղցր զրոյց անելով՝ թէյ խմում, իր երեխաներին փայփայում, գուրգուրում և կլուխը քարշ՝ գնում խանութը իր գործին։

Դամբուլովը Թիֆլիզի հարուստ և յայտնի վաճառականներից մէկն էր։ Նրա խանութը գտնւում էր Գօլօվինսկի պրօսպէկտում։ Դերասիմ Եակուլիչը ունէր չորս որդի, որոնցից ամենամեծը, 16 տարեկան Անիչկան, սովորում էր I իգական գիմնազիայում. իսկ միւսները բոլորն էլ տղաներ էին և սովորում էին տեղական գիմնազիաներում։ Դամբուլովի կինը, Սալօմէն, թէպէտ երեսունն արդէն անցել էր, բայց բաւականին գեռ թարմ էր և գեղեցիկ։ Նրա թաւսակրաւէ տակին նկարւել էին նրա թուխ-թուխ ունքերը, իսկ ունքերի տակին սլսպղում էին նրա գոհար աչքերը, իսկ գոհար աչքերի տակին ժպտում էին նրա վարդագոյն շրթունքները, իսկ վարդագոյն շրթունքների տակին բարձրանում էր նրա գիւթիչ կուրծքը...

Դերասիմ Եակուլիչը, ինչպէս ինքը հաւատացնում էր, այնքան պաշտում էր Սալօմէին, որ նրա մի մատը չէր փոխել երկնքի հրեշտակների հետ։ Մինչև անգամ երբ մարդ ու կնիկ մենակ էին լինում, Դերասիմ Եակուլիչը փաղաքշանքով ասում էր Սալօմէին.

—Սալօմէ ջան, թամամ աղունակ իս, աղունակ։

—Բաս դուն էլ, վուր թամամ ջէյրան իս։ Պատասխանում է Սալօմէն և իր մարդու գիրկը նետւում,—քու սալանդար բոյն ու բուսաթը, քու ապրեշումի բիխիրը սաղ աշխարքի հիդ չիմ փոխի։ Ըէն գենացալօս Սալօմէ։

Ականջիդ եմ ասում, ընթերցող, այդ «ապրեշումի բիխիր» կոչւածը կատարեալ ցախաւելի էին նմանում, ո-

րոնք փուել էին այս ու այն կողմ Գերասիմ Եակուլիչի թրաշած երեսի վրայ։ Փակագծի մէջ նկատենք, որ այդ երեսը, թէպէտ պարարտ մսից էր բաղկացած, բայց դոմէշի կաշու կարծրութիւն ունէր։ Այդ ամուր երեսի վրայ էր բազմել Դանբուլովի հաւանդ-դասդայլի նման քիթը։ Խոսկայէս չէր կարելի ասել, որ Դամբուլովի տեսքը անճոռնի էր։ Ընդհանրապէս նա բաւականի ճոռնի էր, եթէ ընթերցողը կրների ինձ այսպիսի խօսք գործ ածելու։

II

—Աղջիկ-պարոնը որտեղ է, Սաշկա? հարցրեց ռսերէն Գերասիմ Եակուլիչը իր աղախնին։

—Գնացել է բազարը, հիմի շուտով կըգայ։

Ցերեկւայ ժամի 1-ն էր։ Դամբուլովը խանութից միշտ ժամի 2-ին գալիս էր տուն ճաշելու. բայց այսօր սովորականից մի ժամ առաջ էր եկել։ Նրա որդիները ուսումնարանից դեռ չէին վերադարձել։ Սալօմէն մի փոքր առաջ իր մարդուց հարիւր ռուբլի փող էր վերցրել և գնացել իր համար բալի շորեր գնելու։ Գերասիմ Եակուլիչը, թէպէտ այդ գիտէր, բայց իրան չըգիտենալու տեղ դրեց և հարցրեց իր ռուս աղախնին աղջիկ-պարոնի ուր լինելը։ Սաշկային նոր էր վարժել Դամբուլովը։ Նա մի չքնաղ, կարմրաթշիկ, կապոյտ և գըրաւիչ աչքերով 18 տարեկան աղջիկ էր։ Նա հագել էր մոխրագոյն չթից կարճ շրջազգեստ. իսկ առաջից կապած էր սպիտակ և մաքուր գոգնոց, որի երկու ծայրերը գընդասեղով ամրացրած էին նրա փարթամ կրծքի վրայ։ Աղջըկայ քայլելու ժամանակ բարակ շրջազգեստի ծալքերից նկատւում էին նրա ոտիկները, որոնց վրայ տակից երևում էին կարմիր, երկարասրունգ գուլպաները։

—Ինչպէս է օրդ անց կենում, Սաշկա, գոհ ես վիճակիցդ? հարցրեց Դամբուլովը, հայեացքով կլանելով աղջըկայ թարմութիւնը։

—Փառք Աստծոյ, պարոն, գոհ եմ, պատասխանեց աղախինը սպասկաւանքով։

—Իսկ առաջւան պարոնդ գեղեցիկ տղամարդ էր?

—Այո, նա շատ բարի էր։

—Ոչ, ես այդ չեմ հարցնում. ես ասում եմ՝ թէ նախկին պարոնդ էր աւելի սիրուն, թէ այժմեանդ, հարցրեց Դանբուլովը և ժպտալով նայեց աղջկայ աչքերին։

—Ձեմ հասկանում, պարոն... պատասխանեց աղջիկը կարմրելով։

—Ձես հասկանում, հա՝ հէ, հէ, հէ։ Իսկ դու փեսացու չունես? Չը՞, մի ամաչիր, ասա։ Թէ փեսացուդ արդէն ընտրել ես, ես իմ ծախքով կըկատարեմ ձեր հարսանիքը... լաւ շորեր էլ կառնեմ քեզ համար... Ասա, սիրունիկս, ով է քո սրտի սիրածը?

—Բէզերնի բատալիօնի ֆէլդշ-ֆէբելը... պատասխանեց Սաշկան, աչքերը յատակից չըհեռացնելով։

—Չա՝ Այ Աստւած օրհնի ձեզ երկուսիդ. բաս շնորհաւոր լինի, շնորհաւոր լինի... արի մի պռօշտի անենք...

Աղջիկը յետ-յետ գնաց, բայց Դամբուլովը արագութեամբ գրկեց նրան և ագահութեամբ սկսեց համբուրել նրա շառագունած թշերը։

—Պարոն, պարոն։ Մի՞թէ ամօթ չէ... ինչ էք անում,—աղաղակում էր աղջիկը։

—Հէ, հէ, հէ։ Ամօթը քեզ պէս գեղեցկուհուն չըհամբուրելն է։ Ասաց Դամբուլովը, թողնելով աղջկան,—մինչև անգամ մահացու մեղք է քեզ չըհամբուրելը... քեզ ամեն մի համբուրելը տասը ռուբլի արժէ... ահա, քո այսօրւայ վարձը... Գերասիմ Եակուլիչը գրպանից հանեց մի թղթադրամ և առաջարկեց Սաշկային։ Աղախինը մնացել էր ապշած։

—Առ, բռնի այս փողը, Սաշկա, չետոյ էլի կըբաշխեմ... այսօրւայ մեր դէպքը մեր մէջ մնա... հասկանում ես? Ձըլիկնեմ, չ'իմանամ, որ աղջիկ-պարոնի ականջը գցես...

Սաշկան նայեց թղթադրամին և աչքերը գցեց յատակին։

—Առ, բռնի էս փողը... ամեն մի համբոյրին 10 ռուբլի պիտի տամ սրանից յետոյ։

Դամբուլովը, նկատելով, որ աղջիկը քաշւում է փողը ընդունելու, մօտեցաւ նրան և ծալած թղթադրամը խրեց նրա ծոցը, գոգնոցի տակ։ Այդ րոպէին նա ամբողջ մարմնով մի սարսուռ զգաց։

Յանկարծ դրան զանգը հնչեցրին։

—Աղջիկ-պարոնը եկաւ, ասաց Սաշկան և իսկոյն վազեց դուռը բանալու։

III

—Վահ, երեխերքը չեր չեն էկի? Ասաց Սալօմէն, ներս մտնելով սենեակը,—վահ, Գարսօ ջան, էդ ինչ հանգի ես մտիկ տալի։ Աչքերդ ինչ որ ճկլի-վիլի է անում...

—Վունչինչ, Սալօմէ ջան, մէ ռումկա կօնեակ իմ խմի, ես էնդումէն է։ Ձուրերը առար, հոգի ջան?

—Առ, համա շատ արմաղան իքմին իմ առի... տուն տարայ պարտնիկի մօտ, վուր չուստ կարի ու բալին հասցնի... մէ լաւ բաղդադ էլ առայ, իժում մէ լաւ չիքիլայ իրա նաստաեաշչի հարշիով, իժում մէ լաւ չիխտի-կօպի, իժում մէ լաւ թաւսակրաւի... հորէս երեխերքը հիմի կուգան... Սաշկա, Սաշկա!

—Ի՞նչ կըհրամայէք, ներս վազելով ասաց աղախինը, աչքի տակով նայելով Դամբուլովի վրայ։

—Պադեզդը չըկոզպիս, երէխերքը գալիս են... սահաթի երկուսը խփեց։

Աղախինը հեռացաւ։

—Վաղուց է, էկիլ իս? հարցրեց Սալօմէն իր մարդուն։

—Չէ, էս նիմուտիս դիվիր եկայ... ինչ լաւ, վուր դուն էլ չուստ եկար, թէ չէ տանը մենակ շատ սկուչնա կուլէր ինձ համա։

—Ես էլ իւիստ էի շտապում, գիտէի, վուր հիմի մենակ կուլիս տանը... վազէ վազ եկայ. ճանփին ասում էի՝ իմ կուլի, մէ չուստ տուն հասնիմ ու իմ պետլաճ Գարսօյին տէհնիմ։

—Ինչկուլի գու գալը, Սալօմէ ջան, կինալամ իսկի-քըս գլխեմէս թոչիլ էր քի համա...

Այստեղ մարդ ու կնիկ սկսեցին իրանց սովորական սիրաբանութիւնները։ Մի փոքր ժամանակից յետոյ նրանց որդիները արդէն վերադարձել էին տուն ուսումնարանից։ Սաշկան սեղանատանն էր և ճաշի սեղանը պատրաստում էր։ Պարոնի վարմունքը նրա մտքից չէր հեռանում։ Նա մտածում էր. եթէ թողնի Դամբուլովի տունը և դուրս գնայ, այն ժամանակ նա կըզրկւի այն առատ նւէրներից,

Որդու սիրուհուն է իր հիւանդ մայրը.

որ խոստացել էր պարոնը։ Իսկ եթէ մնայ նրա տանը... ով գիտէ, վերջը ինչ կըպատահի։

—Էհ, ինչ որ պատահում է, թող պատահի... իմը փողն է։ Ասայ ինքն իրան Սաշկան, հաշտւելով իր ճակատագրի հետ,—փեսացուն ինչ գիտէ, թէ ինչ է կատարւում գունջ ու պուճաղներում։

Սպասաւոր Ծառան ներս գնաց և յայտնեց Պանրուլովներին, որ ճաշը արդէն պատրաստ է։ Գերասիմ Եակուլիչը հաւաքեց իր շուրջը իր բոլոր ընտանիքը և սկսեց ճաշել։

Նրանց ճաշելու ժամանակ սպասաւոր Ծառան, Իլիկօն, նախասենեակից ծկտի էր տալիս դէպի սեղանատունը, նայում Սալօմէին և քթի տակին ժպտում։ Իլիկօն մի յաղթանդամ և վառվռուն խմերէլ էր։

Նրա թարմ և առոյգ երեսին դեռ նոր էր բուսել առաջին աղւամազը։ Իսկ նրա պատանեկական ձայնի մէջ լսւում էր հասունութեան առաջին տեմբրը։ Իլիկօն հագած ունէր սպիտակ շալից չերքեզկա սև մասրաներով. իսկ մէջբը սղմել էր արծաթապատ նեղլիկ գօտկով։ Նրա բոլոր շարժւածքը թեթև էր և արագ, կամ ինչպէս քաղքցին ասում է կօխտա։

Սալօմէն նկատելով Իլիկօյի դլուխը, ձեռքով նշան արեց, որ նա հեռանայ։

—Ի՞նչ խաբար է,—հարցրեց Գերասիմ Եակուլիչը, նկատելով Սալօմէի ձեռքի շարժումը։

—Վունչինչ, ճանճ քշեցի,—պատասխանեց Սալօմէն լուրջ դէմքով։

Թէպէտ աշնան վերջերքն էր և ճանճերի հոտն անդամ չըկար, բայց Գերասիմ Եակուլիչը, գոհ իր կնոջ բացատրութիւնից, կրկին գլուխը կախեց և սկսեց խոշտել սուպը։

IV

Սաշկայի վարձելուց անցել էր մի ամիս։ Ձլացուցիչ փողը, որ մինչև անգամ մօլլայնի իր մէչիդի մէջ քրխոտնեայ կըդարձնի, Գերասիմ Եակուլիչի և Սաշկայի մէջ արդէն մօտ յարաբերութիւն էր հաստատել։ Նրանք այնքան մօտ էին միմեանց, որ հազիւ թէ նրանց արանքում մի չթէ շապիկ կարողանար տեղաւորւել։ Գերասիմ Եակուլիչը կարգադրել էր, որ իր առանձնասենեակում մի անկողնակալ սարքեն, որովհետև նա գիշերները երկար պիտի նստէր և իր առևտրական հաշիւները կարգի բերէր։ Գերասիմ Եակուլիչը մինչև կէս գիշեր զբաղւում էր իր հաշիւներով, իսկ յետոյ, երբ բոլոր տանեցիք արդէն քնած էին լինում, գիշերային արշաւանքներ էր գործում։

Ննջարանը շատ էլ հեռու չէր առանձնասենեակից։ Այդ երկու սենեակները միայն մի ընդարձակ դահլիճով էին բաժանւում միմեանցից։

Բոլոր այդ սենեակները միանում էին միջնադռներով։ Բացի դրանից ամեն մի սենեակ ունէր իր առանձին դուռը՝ կօրրիդօրի կողմից։ Կօրրիդօրը սկսւում էր դրսի դրան սանդուղքներից և վերջանում էր պատշգամբով, որտեղ դանւում էր խոհանոցը և Իլիկօյի սենեակը։ Իլիկօյի սենեակից մի փոքր հեռու գտնւում էր Սաշկայի սենեակը։

Գիշերւան ժամի 3-ն էր։ Խորին լռութիւն էր տիրում Դամբուլովի ամբողջ կացարանում. Գերասիմ Եակուլիչը ցածրացրեց լամպարի լոյսը և զգոյշ քայլերով դուրս եկաւ մութ կօրրիդօրը։ Այնպէս էր կարգադրւած, որ կօրրիդօրի լամպարը միշտ հանգցնէի, հէնց որ ամենքը պառկում են քնելու։ Գերասիմ Եակուլիչը ոչինչ չէր տեսնում մըթութեան մէջ։ Նա պատը շօշափելով, փոխեց քանի ոտ, մի կերպով հասաւ Ննջարանի դռան, ականջը մօտեցրեց փականքին և սկսեց ականջ դնել։ Ննջարանումն էլ խորին լռութիւն էր տիրում։ Յանկարծ կօրրիդօրի մութ անկիւնից նա լսեց փափուկ ոտնամանների քրթքրթոց։ Գերասիմ Եակուլիչը սկսեց խարխափելով առաջ գնալ և պատշգամբի դռան մօտ նկատեց մի ստւեր։

—Իլիկօ ջան, դռւ ես։—շշնջաց ստւերը կանացի ձայնով։

Գերասիմ Եակուլիչը մնաց ապշած։ Ձայնը Սալօմէինն էր։

—Չրամանքս, ես եմ, աղջիկ-պարոն,—շշնջաց Գերասիմ Եակուլիչը Իլիկօյի ձայնով։

—Էլ ինչու դուրս եկար,—շարունակեց Սալօմէն,—ես հէնց քո սենեակն էի գալիս...

—Ձատ սպասելուց աչքս ջուր կարեց, աղջիկ պարոն—շշնջաց Գերասիմ Եակուլիչը։

—Գենացվալէ, դադար չես տայ, որ Գերասիմ Եակուլիչը շնթրկւի?

—Գերասիմ Եակուլիչի կատաղութեան չափ չըկար։ Նա ուզում էր հէնց այն րոպէին ոտքի տակ գցել Սալօմէին և ջախջախել իր ոտների տակ, բայց մի կերպով իրան զըսպեց։ Այդ րոպէին յանկարծ պատշգամբի դուռը թրխկաց։

—Ո՜ւֆ, ճակատս,—շշնջաց կանացի ձայնով մի երրորդ ստւեր և ընդհարւեց Գերասիմ Եակուլիչին։

—Ախ ներողութիւն, պարոն, դուք էք? Ես երկար սպասեցի ձեզ...

Այդ երրորդը Սաշկան էր։

Երեքն էլ լռեցին և մնացին ապշած։ Այդ միջոցին Իլիկօն, լսելով դռան թրխկոցը, լամպարը ձեռին մտաւ կօրրիդօրը։

ՅԱՐ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԱԳԱ ՆԵԳՐԻ

(Իտալերենից)

Մի տխուր գարնան խոնաւ առաւօտ
Մի փոքրիկ ծաղիկ խոտերում բացւեց.
Օրը շատ էր ցուրտ. կեանքին դեռ կարօտ
Ծաղիկն թառամեց։

Մի տխուր գիշեր դողդոջ շրթունքիս
Թրթռուն համբոյրս ես համար ծաղկեց.
Գլուխս դարձուցի. նա՝ վարդը կեանքիս՝
Համբոյրն թառամեց։

Գ. ԳՕԼՕՂԵԱՆ

Վիեննա.

ՍԵՒ ՏԵՍԻԼՔԸ

Եւ աշխարհ ամբողջ, հրեւանիով լեցուն,
Օրհնութեան երգեր բարձրացուց անվերջ։
Յոյսի վարդաթոյր արշալոյս՝ մ'անհուն
Փրթեցաւ դժբախտ մարդոց սրտին մէջ։

Տարրերը, զարթ, գովեստներ ըսին.
Նիւթը խօսք առաւ, եւ ուրախութեան
Ձուկ մ'օդին մէջէն անցաւ հեշտագին.
Ու հողին ծոցէն բուրումներ ելան։

Ու ծաղիկն, ու ծովն, ու գետիւռը գով,
Երկինքին անարատ, թռչունն ու լուսին,
Ու հրեշտակներն արծաթ թեւերով,
Աստուծոյ կոյս-մօրն օրհնէնքներ ըսին։

Մրսուռն երկնքի լոյսով կըծողար.
Ու հովիւներուն, մոգերուն մօտիկ,
Արեւի մը պէս, մաքուր ու պայծառ,
Կըճառագայթէր Աստւածը մանկիկ։

Եւ անպարագիծ բերկրանքով մ'հոգին
Խորունկ դողալով, օրհնութիւններուն
Անուշ խունկին մէջ օրւած մեղմագին,
Փպտեցաւ Մարիամ ժըպիտով մ'անհուն։

Հայց ձեռ մ'այն ատեն, Չարին ձեռքը մութ
Հեռուն անդունդ մը բացաւ ըստւերի.
Եւ անդունդին մէջ, մերկ լեռ մը ժայռուտ
Ցցւեցաւ անեղ կողերով վայրի։

Ոգեվար լուսնի նահանջ մը թեթեւ
Լերան վրայ ընկաւ. ու սարսափահար,
Մարիամ հոն կանգնւն տեսաւ խաչ մը սեւ
Ուր լո՛ւռ կ'արիւնէր մարմին մը նիհար։

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

Բարիզ.
3 յուն. 97.

Տեղագրական

ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՔ ԵՒ ՌՈՒԼՂԱՐԱՀԱՅՔ

I

Ռուլղարիան ամենէն մերձաւոր երկիրն եղաւ, որ հիւրընկալեց անխտիր գհայ փախստականս, թւով մօտ 20,000 չքաւոր անձինք, Կոստանդնուպոլսոյ արուարձիէն վերջին դէպքերէն յետոյ։ Սոքա նախապէս մուտք գտան Վառնա և Ռուրգաս ծովեզրեայ քաղաքներէն, իրենց բեռներովն հանդերձ, և քաշուեցան խումբ առ խումբ հայաբնակ այլ և այլ քաղաքներ, որպէս՝ ի թիւս այլոց՝ Փիլիպպէ, Ռուսչուկ, Սիլիստրէ, Զումլա, Դոմբրիչ, Ոազգրադ, Ռուրգաս, Վառնա, Տրնովա։

Ռուլղար կառավարութիւնն արաւ մարդասիրաբար գնահատելի դհոդութիւններ և առատութեան նպաստներ. գայս կապացուցանեն բազում պարագաներ, զորս մի առ մի ճշտապէս թւել աստ չ'է ինձ կարելի։ Սա չափ միայն ասեմ, թէ բարեհաճ բարձրագոյն հրամանաւ մը կարելի եղաւ թշւառ փախստականաց ձրիաբար փոխադրել մի քաղաքէ ուրիշ քաղաքներ, ուր տեղեր՝ տեղային քաղաքապետութեանց կողմանէ՝ յիշեալ փախստականաց համար բնակութեան տեղ, հաց և դրամական նպաստ չըխնայուեցան մարդասիրաբար։ Վերջին ժամանակներ՝ փախստականաց նպաստելու նպատակաւ հասան նաև օտար բարեգործական ընկերութեանց պատւիրակներ, որոց շնորհիւ՝ առ այժմ գրեթէ թեթևացաւ տաժանակիր բեռն, զորս ունէին թէ բուլղարահայք և թէ բուլղար կառավարութիւնն։

Յիշեալ պատւիրակներն Ռուլղարիոյ գլխաւոր հայաբնակ քաղաքներն այցելելով, այնտեղեր ապաստանեալ փախստականաց վրայօք տեղեկագրեր և ցուցակներ պատրաստեցին՝ դրկելու համար իրենց կեդրոնական վարչութեան։ Եւ ստուգիւ, Վառնա և Սոֆիա քաղաքաց հիւպատոսաց միջոցաւ հասած են արդէն կարևոր գումարներ, որք՝ տեղային հայ Նպաստամատոյց յանձնախմբոց յանձնւելով՝ պիտի գործածէին փախստականաց անհրաժեշտ պիտոյից համար, էական պէտքն լինելով հաց և փայտ։ Իսկ մնացեալ պէտքերն արդէն հայթայթւած են տեղային նպաստներով, որոց անխտիր մասնակցած են ամեն ազգաբնակութիւններ։ Ընդհանուր կերպիւ, այժմ, ամեն հայ Ն. յանձնախմբեր կրպատրաստեն ցանկեր՝ պատւիրակաց մասնաւոր հրաւէրով, առաքելու իրենց հասցէին։ Եղած խոստմանց համաձայն՝ հետևաբար, հայ փախստականաց համար օգնութիւն չըպիտի անպակասի։

Մեր սիրելի Ռուլղարիան բարեհաճութիւն յայտնած էր իր սազմ երկրին մէջ հիւրընկալել 20—25 հազար հոգի։ Սոցա շատեր անգործ մնացին դժբախտաբար, երկրին առևտրական ասպարիզին փոքրութեանը պատճառաւ. սակայն, եթէ ասպնջականէր Ռումանիան—որ կըպարծենայ յոլոորտաբար հռովմէական (?) լատին ցեղէ լինելն, իբրև քաղաքակրթեալ և լուսաւորեալ մի քրիստոնեայ տէրութիւն, և ուրիշ ազգերու պէս barbare չըլինելն ըստ հռովմէական հանճարոյն,—փախստականաց վիճակն մեծաւ մասամբ չըպիտի լինէր անգործ և տաժանելի։ Զի Ռուլղարիան՝ բազդատմամբ Ռումանիոյ, նւազ վաճառաշահ երկիր մ'է, և չունի այնքան գարգացած նաւահանգիստներ և առևտրական հրապարակ։ Սակայն և այնպէս, ի նկատի ունենալով այս ամեն, նորաստեղծ փոքրիկ Ռուլղարիան ազգային շատ աւելի ընտիր առանձնայատկութիւններ և մարդասիրական ազնիւ ձեռքեր ի յայտ բերաւ քան զվէսն Ռումանիա, որ իր շահուց համար ոտնակոխ արաւ ամենէն տարրական մի բարիք... Ինչ եղաւ սակայն իր շահ, զոր ունեցաւ

իր այս հայատեացութեամբ. այն է, թէ կրցաւ առաջնորդարան մը ձեռք բերել Իսկիւբ, ի Մակեդոնիա։ Բուլղարիան գոյդ վաղուց արդէն ունեցած էր, ինչպէս՝ Յիւսկիւբ և Օխրիդ (1890 թ.), և ի Նեւրոկոպ (1894 թ.), առանց նոյնօրինակ ստորին քայլ մի կիր առնելու... Թող մեծահոգի փոքրիկ Բուլղարիան օրինակ լինի փոքրահոգի մեծն Ռումանիոյ, կարենալու համար գրաւել մի պատուաւոր տեղ մարդկութեան և մարդասիրութեան տիեզերական հորիզոնին ներքև... .

Որպէս արդէն հաղորդեցին թերթերն ժամանակին, թէ փախստական հայերն պարտաւոր էին՝ սուլթանական մի իրադէի համաձայն՝ ի հայրենիս վերադառնալ կարճ ժամանակամիջոցի մը մէջ, քաղաքային իրաւունքներն և ունեցած ստացուածքներն չկորուսանելու համար, գտնուեցան բանականաթիւ չօժարամիտ փախստականներ՝ որ փափագեցան արտասահմանէն վերադառնալ իրենց հայրենիք։ Այսպէս, ինչպէս այլ և այլ պարագաներու մէջ ալ, անցեալ շաբաթներ Աթէնքէն հարիւրաւոր հայեր գերմանական շոգենաւով մը հայրենիք վերադառնալու մտօք մերժուելով սուլթանական կառավարութենէն, ստիպուեցան դարձեալ ապաստանելու գալ ի Բուլղարիա՝ Վառնայի վրայով. և չդիտցիր այս անորոշ վիճակ մինչև ո՛ր ժամանակ դեռ պիտի տեւէ...

Օտար բարեգործական ընկերութեանց կողմանէ միտք կըլլացաւ առաջարկելու բուլղար կառավարութեան՝ երկրագործութեան նպատակաւ հայ փախստականաց համար հողեր ձեռք բերել Սիլիստրէի նահանգին մէջ, որ կրկազմէ ռումանապատկան Դոբրիւկայի արևմտեան մի մասն։ Եթէ այսպիսի մի առաջարկ եղած է ժամանակին առ բուլղար կառավարութիւն, յուսալի է որ՝ Ազգային Սոբրանիոյ միաձայն որոշմամբ՝ իրագործուի այս միտք, օր մը Բուլղարահայք ալ ունենալով մի երկրագործ համայնք։ Ի նկատի ունենալով զայս՝ սա ևս յուսելունք, թէ մեր փախստական հայ պիւղացիք հաճութիւն չ'են տար այս օրինակ մի կարգադրութեան, եթէ իրագործուիլն մ'ունենար։ Ի դէպ՝ փախստականաց մէջ կրգտնուին անպարկեշտ անձինք զորս բուլղար տէրութիւնն երբեմն կ'առաքէ մեզի, հայերէ անբնակ քաղաքներ կամ գիւղեր։ Կրգտնուին նաև ծոյլ՝ չըգործելու հակամէտ բազում անձինք, զորս Ն. Յանձնախումբք երբեմն կըզրկեն հացէ՝ զայն աշխատութեամբ ձեռք բերելու մղումն տալու յոյսով։ Զատ կասկածելի կը թուի նոցա գործի մը վրայ հաստատուն մնալն կամ մնայուն կենալն...

Առժամապէս տեղի տալ այս բարերար կարգադրութեան՝ դուցէ խոստմնալից լինէր հայ փախստականաց, Բուլղարիայի փոքրաթիւ հայ գաղթականութեան արժանեաց ղէնիթեն՝ բուլղար տէրութեան հանդէպ՝ մի օր յաջողակի բարձրացնելու յոյսով։ Իրենց բուլղարահայ եղբարք պիտի կարենային տալ նոցա քայլից բանաւոր ուղղութիւն, խոհեմ և հիմնաւոր քայլափոխեր անելով, եղանակաւորելով ներդաշնակութեամբ իրենց կենսատու կարիքներ՝ ըստ պահանջից երկրին ներքին հանգամանաց։ Բուլղարիան՝ այսպէս, շատ բարի տրամադրութիւններ կրտածէ մեզ համար, եթէ գիտնայինք վաղ ընդ փոյթ օգտուիլ։ Այժմ Բուլղարիան կրգտնուի իր վերածնութեան մանկութեանը մէջ, յորմէ պարտ եմք օգտուիլ ջանալ այժմէն իսկ։

Ի՞նչ կըմտածեն բուլղարահայք այս ուշագրաւ խնդրոյն մասին. ի՞նչ կ'անեն ինտելիգենտիան. ի՞նչ կըխորհին նաև Ն. Յանձնախումբք փախստականաց ապագային վրայ։ Այսօրինակ շատ խնդիրներ կան ի միջոց վիճելի և անմիջական դարմանի կարօտ, սակայն՝ մեր սիրտն ի ցաւ, չըկայ այս մասին բանիւ և գործով հասկացողներու, խորհողներու և միանգամայն գործողներու բաւականաթիւ մարմին մը, որ անմիջական հոգ և դարման տանէր այս և այլ պէսպիսագոյն ոտկոյս խնդրոց։ Գործ կայ, այլ գործող չըկայ։

Ի վերայ սոցա՝ նաև չեն անպակաս ի բուլղարահայս արտաքին պարագիտք և ներքին միկրոբք, զորս ապտակել և խարազանել անհրաժեշտ կարիք կայ, այլ սակայն, ի հեռուկս այս ամեն կարեաց, չեն գտնուիր այս մասին վրայ դրիչ շարժող բնիկ բուլղարահայք, ոչ այլ մի անկախ և ազատ ազգային թերթ՝ որ խղճի մտօք ջանք տանէր առաջ բերելու մեր մէջ ընդհանուր ազգային համոզում հանդէպ այս անհրաժեշտ կարեաց և անգոսնելի մահացուցիչ միջատներու, որք կըվխտան ի մեզ՝ մեր ազգային չարկերուն և այլ պէսպէս գործոց մէջ։ Ի դէպ է ասել, թէ բուլղարահայն այս ամենն զղալով և համոզելով միշտ պիտի շարժէր կամ վերաբերուէր չօգուտ բարւոքման և բարենորոգման իր ազգային պէսպէս խնդրոց, իր այս շարժմանը կամ վերաբերմանը մէջ չ'ունենալով ո և է նկատում կամ շահագիտական ծդտում. նա ականատես լինելով և՛ պիտի փորձէր, և՛ պիտի գրէր, և՛ պիտի սրախօսէր, և՛ պիտի խարազանէր կամ հարւածէր ազգային յետադիմութեան ներքին և արտաքին միջատներն հանդէպ ակընկալելով կամ բաղկացեալ առաջդիմութեան, ցոյց տալով հարկաւոր զարմանն և անհրաժեշտ ուղղութիւնն. վերջապէս, նա ամեն պարագայի մէջ նախանձախնդիր պիտի լինէր մահացուցիչ պարազիտաց և տարափոխիկ միկրոբաց հիմնաւոր բնաջնջումն փութացնել, որ են սկզբնապատճառք մեր ամենակերպ յետադիմութեանց...

(Կըշարունակուի)

Սիլիստրէ. ԱԿՆԵՒԻ

Հրօրհնէքի տօնական ներկայացումներն էլ անցան յաջողութեամբ։ Մինչև յունուարի 8-ը օպերային թատրոնում ասեղ գցելու տեղ չէիք գտնիլ։

Այս տասներկու օրւայ ընթացքում կայացան առաջնակարգ երեք երգիչների բենեֆիսները. տ. Էնկելհարտ — Օտելլո, տ. Սիներբերգի — Կարմէն և պ. Մարսակովի — Համլէտ։ Այդ ներկայացումներին էլ թատրոնը ծայրէծայր լիքն էր. հասարակութիւնը շատ ցոյցեր և թանկագին ընծաներ տուաւ սրանց երեքին էլ։

Տ. Էնկելհարտ Դեզդէմոնայի դերում, Պերէս-Օտոէլօ սքանչելի են։ Սակայն ոչ Մարսակով և ոչ Զիակմէլօ լաւ եագո

չեն։ Տ. Պիցակալի Դեզդեմոնայի դերում թոյլ է տ. Էնկիստից։

Տ. Սիւներբերդ, որ այնքան հմայիչ է Տրովադորի, Այիդայի մէջ, Կարմէն չըկարողացաւ լաւ պատկերացնել։ չարգելի երգչուհու խաղը շատ անհարթ էր, մանիէրները ոչ չքնաղ, այլ գռեհիկ։ Տեղ-տեղ երևում էր տ. Սիւներբերդ իր բարձրութեան վրայ կանգնած, բայց ընդհանուր առմամբ թոյլ էր Կարմէնը։ Պ. Մաքսակով—Տորէադոր ստացաւ շատ ծափահարութիւններ։ Բայօկն ու սլարտէրի մի մասը թէ տ. Սիւներբերդին և թէ պ. Մաքսակովին կրկնել տուին մի քանի արիաներ այն հրաշալի, բազմազան մուզիկայից, որ ստեղծագործել է Բիզէ։ Տ. Մարշադ Մակալէի փոքրիկ դերում ցոյց տւաւ թէ որպիսի հմտութեամբ կարող է արտայայտել անպաճոյճ, անարատ սէրը և զգացմունքը։

Մաքսակովի բենեֆիսին դարձեալ տօնական տեսք էր ստացել մեր թատրոնը, որ երկու նախընթաց օրերին կիսով չափ դատարկ էր։ Պ Մաքսակով արժանի էր այն գոփնիներին և ընծաներին, որ նա ստացաւ թատերասէր հասարակութիւնից։

Համլէտն անցաւ թոյլ։ Մարշադ-Օֆելիա շատ գեղեցիկ էր, մի՛սները կամ մի՛չակ և կամ բոլորովին վատ էին։ Առհասարակ Թոմայի Համլէտը առանձնապէս մեծ գործ չէ։

Երկուշաբթի պ. Պէրէի բենեֆիսին երգելու են Կարմէն։

—

Առաջիկայ փետրուարի 4-ին իշխանուհի Մարիամ Թումանեանցի նախաձեռնութեամբ և իշխանազնուհիներ Ս. Արղութեանի և Ս. Ամիլախուարու մանակդութեամբ թատերասէրների մի խումբ, չօգուտ հայ փախստականների, ներկայացնելու է Խանում պիէսը բանկալին թատրոնում։ Տոմսակներն այժմեանից կարելի է ստանալ նախաձեռնողի մօտ։

—

Առաջիկայ հինգշաբթի պ. Արեւշատեան Սարդարեանի բենեֆիսն է։ Թէև պ. Սարդարեանը ուղղակի չը խոստովանեց իր չանցանքը, թէ սիւալը, Մոդա է քա պասկիլի ներկայացման համար, այնու ամենայնիւ մենք համոզւած ենք, որ մեզ թէ ինքը և թէ իր ընկերները ճանաչում են իբրև անկեղծ բարեկամ հայ թատրոնին։ Յանկանում ենք Մեծապատիւ Մուրացկանների, Բաղդասար աղայարի, Ասլան Բալասի բեմ հանողին յաջողութիւն։

Լսում ենք, որ պ. Պետրոսեանը այսուհետև մասնակցելու է հայ թատրոնական խմբին։

Անցեալ հինգշաբթի օրւայ Պատիւ սլիէսի ներկայացումը չետաձգւել էր։

—

Բէդէր գրացիօզ քոյրերի կոնցերտը, որ եկամուտի կէսը յատկացրւած էր հայ փախստականներին, զուտ արդիւնք տւաւ 222 ր.։ Հայերը ներկայ չէին այդ գեղեցիկ կոնցերտին։ Միմիայն առաջի կարգն էր բռնւած հանդիսականներով, որոնց թւումն էին Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչը, Իշխան Նահանգապետը։ Պէտք է ի նկատի ունենալ, որ այդ 222 ր. մէջ մտնում են և Մեծ Իշխանի, Իշխան Նահանգապետի տոմսակների դնից շատ աւելի վճարւած պրէմիաները։ Ընթերցողին դաղափար տալու համար թէ ովքեր էին ներկայ այդ կոնցերտին, հետևեալ անգամ կըտպագրենք նրանց պնուննները։

ԼՈՒՐԵՐ

Տարազի ներկայ համարում տպագրւած է Հայոց Հարիւրհօր. Ընկ. խորհրդի յայտարարութիւնը, որով ծանուցանում է Տաճկաստանից փախած հայերին, թէ բժշկապետ պ. Հագարատ Նաւասարդեանը ձրիաբար դարմանում է գաղթականներին և այցելում հիւանդներին։ Աւելորդ չենք համարում զեկուցանել, որ բժ. պ. Ֆ. Նաւասարդեանը ձրի բժշկում է հայ գաղթականներին սկսած ռուս-տաճկական պատերազմից՝ Բայազէտի, Ալաշկերտի կոտորածներից մինչև այսօր։ Բաֆֆիի Խենթի բժիշկը պ. Հագարատ Նաւասարդեանն է, որ անձամբ ներկայ լինելով ռուս-տաճկական պատերազմին՝ այնքան խնամք էր տանում հայ գերիների, փախստականների և գաղթականների վրայ։ Վաղուց, շատ վաղուց է, որ մենք՝ խըմբագրութեանս դիմող հայ չքաւորներին շարունակ ուղարկում ենք բժշկապետ պ. Ֆ. Նաւասարդեանի հիւանդանոցը, ուր նրանց ձրիաբար բժշկում են։ Մեր կողմից կարող ենք աւելացնել, որ բժշկապետ պ. Նաւասարդեանի հիւանդանոցի դռները միշտ բաց են թշւառ, չքաւոր հիւանդների համար, ուր նրանք ստանում են ձրիաբար բժշկական օգնութիւն և խորհուրդ։

—

Բարձրագոյն հրովարտակով Դանիայի պալատում ռուսաց արտակարգ դեսպան գրաֆ Մ. Ն. Մուրաւեովը նշանակւեց արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ։

Պ. Մուրաւեովը պատկանում է ռուս երիտասարդ դիպլոմատները կարգին և նորերս իսկական պետ. խորհրդականի աստիճանից բարձրացրւեց հօի մէչտոի աստիճանը, իսկ մի քանի տարի առաջ Բերլինում այնտեղի դեսպանութեան խորհրդական էր։ Այդտեղից տեղափոխւեցաւ Դանիա, արտակարգ դեսպանութեան պաշտօնով, որից կանչւում է այժմ արտաքին գործերի մինիստրի բարձր պաշտօնին։

—

Այն լուրը, որ իբր Օրմանեան պատրիարքը կամենում է հրաժարւել, չի ճշդւում։ Ասում են, որ հրաժարւելու մասին նա իսկի չի էլ մտածում։

—

Times-ը հաղորդում է, թէ Փորթ-Ասիայի նահանգապետները հրամայն են ստացել ցոյցեր անել բէֆորմները մտցնելու դէմ։ Իսկ մի ռուս դիպլոմատի կարծիքով Տաճկաստանի դէմ ցոյցեր պէտք է անել և մինչև անգամ Կ. Պոլիսը զրաւել, որպէս զի զրանով նրան հարկադրեն բէֆորմներ մտցնել։

—

Пет. Вѣд. լրագրում հրատարակւած Հոլստբէմի «Հայ-եղբայրներ» յօդւածը սենսացիա է գործել ռուս մամուլի մէջ։ Այդ յօդւածին ոչ-անկեղծօրէն է վերաբերւում Свѣтъ լրագիրը, ասելով իր մի առաջնորդողում, թէ հայկական բարդ հարցին չըպէտք է մարդասիրաբար վերաբերւել, այլ նրան պէտք է վճռել Թուսիայի շահերն էլ ի նկատի ունենալով։

—

Լրագիրները հաղորդում են Կ. Պոլսի դեսպան Նէլիդովի նշանակման մասին Պարիզում, իսկ նրա փոխանորդ Կ. Պոլսում անւանում են Աթէնքի դեսպան Օնուին։

—

Ներքին գործերի մինիստրը նկատելով «Лучъ» ամենօրեայ լրագրի վնասակար ուղղութիւնը՝ առաջին նախազգուշութիւնը տւեց նրա հրատարակիչ

Պետերբուրգի վաճառական Ա. Վոլֆին և խմբագիր Վ. Ձուկովին, մեղա-նակ արդելելով այդ լրագրի հատով իաճառելը։ Իսկ մի քանի օրից դադա-րեց Лучъ-ը մինչև նոր խմբագիր հաս-տատելը։ Лучъ-ի բաժանորդները այդ ժամանակամիջոցում կարող են ստա-նալ Новости։

—

Новости-ին հեռագրում են Կ. Պոլ-սից, որ քրդերը նորոգեցին իրանց ա-րարքները։

—

Կ. Պոլսից հաղորդում են. «Ի նկա-տի ունենալով հայկական կոմիտէտի թշնամական դործողութիւնը, իսելօք հայերը մի խորհուրդ ունեցան, որին մասնակցեցին պատրիարք Օրմանեանը և արտաքին դործերի մինիստրի օգ-նական Արթին-փաշան, և վճռեցին ուղարկել Եւրոպա Երուսաղէմի պատ-րիարքական փոխանորդ Երիցեանին (որ ընդհանուր յարգանք է վայելում) այն նպատակով, որ նա ամբողջ հայ հասարակութեան կողմից խնդրի այն-տեղի կոմիտետներին, չդրգիռել նոր սպանութիւնների, որը կարող է միայն հայերի վերջնական ջնջման պատճառ դառնալ»։

—

Նորին Կայսերական Բարձրութիւն Մինդրելեան գնդի հրամանատար Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչը յունուարի 6-ին ուղևորուեց Պետերբուրգ։

—

Կ. Պոլսում մահւան դատապարտուածներից չորս հոգի, որոնց թւում և Խասքեօյի քարոզիչը, ազատուած են բանտարկութիւնից։

—

Կ. Պոլսից յետ են ուղարկել իրանց հայրենիքը քրդական հեծելազօրքերը։ Մեկնելուց առաջ նրանց սուլթանի հրամանով ճաշ են տուել Եըլդըզ-Քեօշքում և վճարել են ռոճիկները։ Իբր վարձատրութիւն երևի՝ սպաներին ոսկի են բաժանել, իսկ պինուորներին արծաթի շքանշաններ։

—

Փրանսիացում իրանց դերքով յայտնի փրանսիացի կանայք մի միտինգ են կազմելու ցօգուտ հայկական դա-տի։ Ճառախօսները կըլինեն ազդեցիկ և գրող կանայք։

—

Լրագիրների ասելով Դուռը պետու-թիւնների միջամտութեան առաջն առ-նելու համար, շտապում է իրադործել մի շարք վարչական միջոցներ։ Մտա-դրութիւն կայ նոր մինիստրութիւն կազմելու, որոնցից իբրև երկուսը քրիստոնեայ կըլինին։

—

«Одес. Лист.»-ի Կ. Պոլսի թղթակիցը յայտնում է, որ վերջերս մի հայի ձեռքով սպանել է մի տաճիկ ժան-դարմ։ Հայը ձերբակալել է։ Այս դէպ-քը իրարանցում է առաջ բերել Գա-լաթիայում, որտեղ կատարել է սպա-նութիւնը։

—

Կ. Պոլսում իրարանցում ընկաւ այն լուրի պատճառով, թէ Տրապիզոնում նորից կոտորում են քրիստոնեաներին։ Իտալական պահականաւը մեկնեց Կ. Պոլսից. նոյն տեղը կըմեկնեն աւստրիական և ֆրանսիական նաւերը։ Իտալական դեսպանատունը հաւատացնում է, թէ իր ձեռք առած միջոցը կապ ունի տաճկական ծառայութեան մէջ գտնուող Մարանիի կամայականութեամբ աքսորելու դէպքի հետ, բայց ուրիշ աղբիւրից հաղորդում են, որ Տրապիզոնում տեղական բնակիչների մէջ մի սոսկալի կոտորած է տեղի ունեցել հայրենիք ուղարկուղ քրդական այն զօրքերի ձեռքով, որոնք գտնուում էին Կ. Պոլսում։

—

Այժմ պետութիւնների Կ. Պոլսի դեսպանների մէջ—անգլիական լրագիրների ասելով—կատարեալ համաձայնութիւն է տիրում։ Սուլթանի քրիստոնեայ հպատակների համար մտցնելիք բէֆորմների ծրագրի հետ միաժամանակ՝ դեսպաններն առաջարկներ են մշակել, որոնք խիստ շահա-կէտ են մահմեդական բնակիչների և պաշտօնեաների համար։

—

Եւրոպական դեսպանները նկատո-ղութիւն արին Դրանն այն մասին, որ վերջինս ամնիստի գործադրութեան ժամանակ սկսել է գաւառները ուղար-կել այն հայերին, որոնք փոքրասիացի չեն։ Դեսպանները պահանջում են դադարեցնել հայերին հեռաց-նելը, որովհետև դա հակառակ է ներ-ման իրադէի ոգուն։

—

«Frank. Zeit.»-ի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, թէ դեսպանները յոյս ունին յունուարի վերջին վերջաց-նել իրանց խորհրդակցութիւնները, որոնցից յետոյ դրանց հետևանքները կըներկայացնեն իրանց կառավարու-թիւններին՝ հաստատման համար, յե-տոյ կառաջարկեն Դրանը որպէս իւր-տիմատում։ Նոյն լրագրի ասելով Դու-ռը վերջերս կամեցաւ մօտենալ Անդ-լիային, սակայն անյաջող։

—

Կ. Պոլսից հաղորդում են, որ այն-տեղի բանտերից ազատուած են 450 հայեր։

—

Լոնդոն, 8 յունուարի.—Լորդերի պա-լատում. ուղերձի ընթերցման ժամանակ Սոլիսբիւրին յայտարարում է, թէ չի կարող ասել, թէ բոլոր պետութիւն-ները պարտաւորել են ճնշումն գործ դնել սուլթանի վրայ, Տաճկաստանը փրկելու նպատակով։ Պալատը իրան ներկայացրած դրադրութիւններից կը-տեսնի, թէ պետութիւնները համա-ձայն են միասին գործելու անհրա-ժեշտութեան նկատմամբ։ Հնարաւոր է, որ վճռական ճնշումն արւի։ Ո-տար տէրութիւնների կարծիքների մէջ չնչին տարբերութիւն է նկատ-ւում այդ հարցի մասին։ Ինքը Սոլիս-բիւրին համոզուած է, որ եթէ չընդունեն մի շարք էական բարեկարգումներ, Տաճկաստանի կործանումը չի կարելի շատ յետաձգել։ Բոլոր տէրութիւնները հաւատացած են, որ եթէ լուրջ բէֆորմներ չըմըտցնեն Տաճկաստանի անսահման ինքնագլխութեան մէջ, ամենավատ հետևանքներ կառաջանան դրանից։

—

Times հաղորդում է Կ. Պոլսից, թէ սուլթանը հաստատեց Երթին փաշայի խաղաղասիրական միջոցների մասին արած առաջարկութիւնները, բայց այն կրճատումը, որ արել են պալատի աստիճանաւորները, միջոցների նշանակութիւնը բոլորովին կորցրին։

—

Հրատ. Ընկ. Վարչութեան անձնէը, եռանդուն անդամ իշխանուհի Մարիամ Թումանեանցը իր հրաժարականն է ուղարկել Ընկ. վարչութեան։ Անշուշտ ազնիւ գործիչը անկարող է եղել հաշտել այժմեան բէժիմին, որ պ. Քալանթարի կլակիօրները ստեղծել են մանաւանդ վերջին ժամանակներս։ Ընդհակառակը մոռանալ, որ Հրատարակչ.

Ընկերութիւնը իր բոլոր յաջողութեամբ միմիայն պարտական է իշխանուհի Մ. Թումանեանցին, իսկ նրա այդ գործին անձնատուր լինելու պատճառը՝ մասամբ մենք էինք։ Ժամանակ է, որ հայ գրականական աշխարհով հետաքրքրուողը իմանայ թէ այժմ ինչեր են կատարւում հրատարակչ. Ընկ. մէջ։ Եւ մենք հետևեալ անգամ կրպատմենք մեր ընթերցողներին այդ ձայֆայական սիստեմի մասին։

—

Ջնօրհնեաց հանդէսը Թիֆլիսում անցաւ առանց մի որևէ պատահարի։ Օրը գեղեցիկ էր և ժողովրդի հոծ բազմութիւն ներկայ էր Մկրտութեան հանդիսին։

—

Աստրախանի թեմի սրբազան առաջնորդ Արիստակէս արքեպիսկոպոս Սեդրակեանը երեք նեապում, շատ կարճ ժամանակամիջոցում, ուղարկել է ՀՀ. Ք. 5700 ր. հայ փախստականների և տառապեալների համար։ Սրբազան առաջնորդը այդ գումարը հանգանակել է իր թեմի համեմատաբար սակաւաթիւ հայ հօտի մէջ։

—

Ղարաբաղի թեմական դպրանոցի տեսուչ Մեսրովբ վարդապետը Ջուշում աւետիս է ման եկել և մօտ 1000 ր. ժողովել չօգուտ հայ փախստականների։

—

Թիֆլիսի արտիստական ընկերութեան մէջ կըտրւի մի ներկայացում Տաճկաստանից փախած հայերի օգտին։

—

Անգլիայում տարածւած է այն լուրը, թէ անգլիական թագուհին ցանկանում է իր վաթսուն ամեայ գահակալութեան տարեդարձի օրը հրաժարւել գահից, չօգուտ Ուէլսի պրինցի։

—

Ջուշու քաղաքագլուխը և քաղաքային վարչութեան անդամները հաստատւած են պատշաճաւոր իշխանութիւնից։

—

Բոմբէյում մինչև յունւարի 6 ը հիւանդացան ժանտախտով 3,636 հոգի, մեռան 2,512 հոգի։ Դրութիւնը վատացաւ։

—

Թաթախման երեկոյեան Թիֆլիսում, իր սեպհական տանը, սոսկալի տանջանքներով սպանւած գտան այրի Վատվառէ Անմիրեանին։ Սպանութեան գիշերը ոչ մի աղմուկ չի լինում. սպանողը շատ լաւ ծանօթ է եղած տան ամեն անկիւններին։ Սպանողը հէնց նորերս բանկից ստացել էր 10 հազար րուբլի։ Ասղներ կան, թէ նրան սպանել են կողոպտելու նպատակով. մէւսներն էլ կարծում են, թէ այդ տեղ սիրային դէպք է տեղի ունեցած։ Առայժմ բռնւած է տան ծառան։ Իսկ բընութիւնը շարունակւում է։

—

Новости-ին Թիֆլիսից հեռագրում են. „Անգրկովկասը լիքն է Տաճկաստանից դաղթած հայերով։ Վանի վիլայէթից Սալմաստի վրայով սպասւում է նոր խումբ գաղթականների։ Կարիքը սարսափելի է։ Գլխաւոր չոյսը հասարակութեան բարեգործութեան վրայ է“։

—

Երէկ քաղաքս ժամանեց այրիացեալ Եւդոկիա Ռոբիսովնա Ջերեմետևա, որ այսուհետև իր բնակութիւնը հաստատելու է Թիֆլիսում։

—

Նշանաւոր նաւթարդիւնաբերող պ. Առ. Ծատուրեանը 3000 ր. է նուիրել հայ փախստականների համար։ Այդ գումարը նա Пет. Вѣд. լրագրին է ուղարկել, որի առաջի երեսում և տպագրւած է, այդ չայտարարութիւնը։

խառն լուրեր

Լրագիրները հաղորդում են, որ ազատամիտների պարագլուխ լորդերի պալատում կ'ընտրւի լորդ Կիմբէրլէյ։ Սա Րոզբէրիի կաբինէտում արտաքին գործերի մինիստր էր։

—Կրէտէի վրայ դէպքերը սկսում են վտանգաւոր դառնալ։ Մօտերս հեռագիրները տեղեկացրին քրիստոնեանների և մահմեդականների մէջ տեղի ունեցած արիւնահեղ դէպքերի մասին։ Այդ մասին հիւպատոսները առաջարկութիւններ արին ընդհանուր-նահանգապետ Հերովիչին. վերջինս պատասխանեց, որ ժանդարմերիայի քիչ լինելու պատճառով չի կարող պատասխանատու լինել կղզու խաղաղութեան մասին։ Բացի սրանից ժանդարմերիայի նոր կազմակերպութիւնը միշտ յետաձգւում է։

—Կ. Պոլսում ձերբակալութիւնները տաճիկներից շարունակւում են։ Ի նկատի ունենալով, որ կղզիների վրայ գտնւող ամրութիւններից շատ տաճիկ կայանաւորներ չաճախ փախչում են, յետ են բերւած Կ. Պոլիս։

—Nord-ը հերքում է այն լուրը, որ անգլիական լրագիրները հաղորդել էին, թէ ապստամբութիւն է ծագել Մակեդոնիայում և Կրէտէում։ Կրէտէի վրայ կատարեցան տեղային անկարգութիւններ, որոնք բացատրւում են տաճկական վարչութեան թոյլութեամբ, իսկ Մակեդոնիայում գործւում են 200-ից աւելի ասազակներ, բայց ամբողջ երկիրը (?) խաղաղ է։

—Կանէում (Կրէտէ) կարգը վերականգնած է։ Եւրոպական հիւպատոսների խորհրդով քաղաքը շրջապատող գինւած զրիստոնեաները իրանց գիւղերը դարձան։

– Կրէտէի յեղափոխական կոմիտէն իտալական կամաւորներին չայտնեց պատրաստ լինել առաջիկայում տեղի ունենալիք ապստամբութեանը։

– Յունաստանը արգելել է կամաւորներին Կրէտէ դնալու։

—Ալբանիայում տեղի ունեցան անկարգութիւններ։ Զորս հարիւրից աւելի ալբանացիներ գինւած դիմադրութիւն ցոյց տւին տաճիկ զօրքերին։ Նրանք պահանջում էին տեղական ուսումնարաններում աւանդել ալբանական լեզուն և փոխել նոր տուրքերը։ Տեղական տաճիկ կառավարութիւնները հարկադրւած էին այժմով ցրել ապստամբներին։

—Սուլթանի ծննդեան տօնախմբութիւնը սովորական կարգով կատարւեցաւ։ Կարգը չըխանգարւեց։ Լուսավառութիւնն էլ խաղաղ անցաւ։ Այն լուրերը, թէ տաճիկների կողմից անկարգութիւններ կըլինին, շարունակում են անհանգստացնել մտքերը։

Դաստաստանական

Յունւարի 13-ին Թիֆլիսի Նահանգական դատարանում նշանակւած է Հախպատի վանքի վանահայր Յակոբ վարդապետ Նորատունկեանի սպանութեան գործի քննութիւնը, որը սպանւած է կոդոպտելու նպատակով։ Այս գործում մեղադրւում են նոյն տեղի բնակիչները Նիազ Այվազեան, Սարգիս Քալանթարեան և Եւսեմիա Էլիզբարեան։ Առաջին երկուսը մեղադրւում են սպանութեան, իսկ վերջինը այդ եղեռնագործութիւնը թաղցնելու մէջ։ Մեղադրողներին կըպաշտպանէ երդւեալ Հաւատարմատար Տուրկևիչ։

ԱՆՆԱՊԱՏՉԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Տրապիզոնից մինչեւ *Հէյրատ* ռուս կառավարութիւնը կրսկսի շուտով անցկացնել երկաթուղի գիծ։ Այս մի փառաւոր յաղթական է, որ մեր պետութիւնը ձեռք է բերել արդէն։ Հնդկաստանից ուրեմն ցամաքով երկաթուղին կըմերձենայ Ռուսաստանի եւ կարսահանի այնտեղ մեր մանիֆակտուրային եւ այլ ապրանքներ։

Ի ԴԷՊ Ս

Այժմեան «Մշակ» լրագիրը (№ 3) իր սովորական չար նախանձից դրդուած, Ֆ. Ե. Ը. խորհրդի ծանուցման՝ բժշկապետ պ. Ե. Նաւասարդեանին հայ փախստականներին ձրիաբար բժշկելու առիթով, հարց է տալիս թէ այն ո՞ր բժիշկն է, որ գաղթականներին ձրիաբար չի բժշկել։ Ապա յայտնում է, որ բժիշկ պ. Կ. Ստեփանեանը սրանից շատ առաջ, նոյն իսկ գաղթականների հոսանքի սկզբում ոչ միայն յանձն է առել նրանց ձրիաբար բժշկել, այլ եւ ձրիաբար դեղեր էր մատակարարում եւ այժմ եւս շարունակ մատակարարում է նրանց։

Անշուշտ, բժ. պ. Կ. Ստեփանեանը իրան յատուկ համեստութեամբ գոհ չի մնալ այժմեան Մշակից, որ նրա գործունէութիւնը վերագրել ձրի դեղեր մատակարելը եւ ձրիաբար գաղթականներին բժշկելը։

Չինական պատերում պատսպարուած այժմեան Մշակի խմբագիրները կամ տեղեակ չեն եւ կամ ձեւանում են տգէտ, որպէս զի չբխոստովանեն ճշմարտութիւնը, այն է, որ բժ. պ. Կ. Ստեփանեանը եւ նրա հետ քաղաքային բոլոր բժիշկները (участковые врачи) ստանում են քաղաքից ռոճիկ, որպէս զի քաղաքի չքաւոր հիւանդներին ձրիաբար բժշկեն։ Քաղաքի այդ բժիշկները իրանց չքաւոր հիւանդների համար դեղօրայք ստանում են բոլորովին ձրի քաղաքային հիւանդանոցի դեղատնից։

Մեր կարծիքով անհրաժեշտ է քաղաքի այս մարդասէր կարգադրութիւնը շարունակել ոչ միայն լրագրներում, այլ եկեղեցիներում, հրապարակական տեղերում եւս յայտարարել եւ հասկացնել քաղաքի չքաւորներին, որ նրանք իրաւունք ունին իրանց թաղական բժշկից ստանալ ձրիաբար բուժշկական օգնութիւն եւ քաղաքային դեղատնից դեղօրայք։

Գալով բժշկապետ պ. Ե. Նաւասարդեանին, սա ընդունում է չքաւորներին իր սեպհական, մասնաւոր հիւանդանոցում (ոչ քաղաքային) եւ ոչ միայն այսօր, այլ իր այդ օգտակար հիմնարկութիւնը բացած օրից, որ շատ լաւ յայտնի է քաղաքիս բոլոր ազգաբնակութեան։

Ֆ. Ե. Ը. պատկառելի խորհուրդը, ցաւում ենք եւ զարմանում, թէ ինչու չի յայտարարել, որ բժ. պ. Ե. Նաւասարդեանի բարեհայեցողութեամբ մատակարարւում է փախստական հայ հիւանդներին կազդուրիչ խմիչք եւ ուտելիք։

Իսկ եթէ քաղաքում կան բժիշկներ, որոնք ձրիաբար չեն այցելում հայ հիւանդ գաղթականներին, դրա կանապէս յայտնում ենք, որ այո՛ կան, բայց թէ այժմեան Մշակը այդ մասին էլ տեղեկութիւն չունի, մեզ մնում է կրկին ցաւել նրա այդքան կարճատեսութեան եւ սահմանափակ շրջահայեցողութեան մասին։

Մեր այս նկատողութիւնը վերջացնում ենք նրանով, ինչով սկսեցինք, —այն է, որ Մշակը չար նախանձից դրդուած՝ յանդգնաւոր է համարում Ֆ. Ե. Ը. պատկառելի խորհրդին, որովհետեւ նա յայտարարութիւն տպագրելով, յայտնում է թէ բժշկապետ պ. Ե. Նաւասարդեանը ձրիաբար բժշկում է փախստական հայ հիւանդներին։

Մեր պատկերները

I

ԿԱՐԹԱԳԻՆԱՑԻ ԿԱՆԱՅՔ

Հին Կարթագէնը քանիցս անգամ վտանգի մէջ է եղել, թշնամիները նրա հարստութիւնները կողոպտելու եւ երկիրը ստրկացնելու նպատակով արշաւել են նրա վրայ։ Այդպիսի վտանգների ժամանակ նոյն իսկ կանայք ընդհանուր ոյժով դիմադրում էին թշնամուն եւ իրանց թանկագին իրերը դնում էին հայրենիքի փրկութեան սեղանի վրայ։

Ահա այդպիսի մոմէնտն է ստեղծադործել նկարչի վրձինը։ Ընծայաբերութեան անխտիր մասնակցում են սիրասուն հարսներ, օրիորդներ եւ պառաւներ։

II

Թոռը սիրում է իր հիւանդ պապին.

Ո՞րպիսի տագնապով նկարիչը ցոլացրել է դեռահաս օրիորդի սիրտը իր պապին։ Նա խոնարհած դէպի իր հիւանդ պապը, որի կեանքի արեւը մայր մտնելու վրայ է, մօտեցրել է նրան ծառի թարմ ճիւղը. կարծես նրա հոտով ուզում է կենդանացնել գառամեալ ծերուկի խորտակուած սիրտը։

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՆԻԷՐ

Ողիական պատկառանօք բախտ ունեցանք տանալ Նորին Վեհափառութեան կողմից ուղարկուած երկու գեղեցկակազմ Օրացոյց ընծայ եւ Նոր Տարու առիթով Հայրապետական բարեմաղթութիւններ։

ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ 1897 Թ. ՆԻՒԵՐՈՂՆԵՐ

Աղբիւր-Տարազի ներկայ 97 թ. մի մի օրինակ նուիրել են պ. Բունիաթ Յովհ. Մէլիքենկեանց Ինգելոս (Նարսկատան) հայոց ուսումնարանին, պ.պ. Ալէքսանդր Միքայէլեանց եւ Աւետանդիլ Աւետանդիլեանց Մարաղի (Արսկատան) հայոց դպրոցարաններին։

Պետերբուրգ, յունուարի 2-ին։ Ներքին առաջին վիճակագրութեան կենտրոնական կոմիտէն գործարանների ընկերական հետեւեալ տուեալները (61-րդ տիրաժ)։

№ սերիայի։	№ տոմսի	№ սերիայի	№ սերիայի։	№ տոմսի	Գումարը։
9,154	46	200,000	10,714	19	1,000,000
10,815	38	75,000	17,201	15	
12,888	15	40,000	5,322	9	
8,898	30	25,000	13,101	46	
12,677	18	10,000	14,690	46	
6,148	10	10,000	850	19	
0,673	8	10,000	1,578	32	
6,477	1	8,000-ական	4,605	19	
19,373	15		8,403	36	
11,330	2		16,945	43	
9,624	16		18,620	38	
17,005	32		3,986	38	
15,707	23	5,000-ական	12,527	28	
15,625	49		10,237	28	
3,919	1		2,616	42	
7,784	16		6,725	37	
15,772	32		9,460	38	
8,321	36		16,475	38	
1,158	35		12,415	23	
6,144	36		16,176	5	

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Կաղզուան. Տարաբախտ. Ձեր լեզուն կոկ է, խորհուրդ ենք տալիս նաղտոնից եւ ուրիշ զգայուն գրողներից պատկերներ, բանաստեղծութիւններ թարգմանել։

Նուվսի. Ֆ. Ե. Ը. Գր.-ընթ. Ձեզ չէ ուղարկած Ս. Իզմիրլեանի ճենապակու վրայ պատկերը, որովհետեւ չէր վճարել 11 ր. 60 կ.։

Մոսկւա. Լ. Գր. Կիսատ յղուածներ չենք կարդում. բարեհաճեցէք ուղարկել շարունակութիւնը։

Աղդամ. Յով. Խաչ. Դուք բաժանորդ էք պրել Տարագին 97 թ. համար եւ կամենում էք ստանալ ս. Էջմիածնի ճեմարանի ճեմարանական վրայ պատկերը, —այդ անկարելի է։ Նոյն իսկ 97 թ. պրէմիաներն էլ չէք ստանալու, որովհետեւ բաժանորդ էք միայն Տարագին։ Ուշադրութեամբ կարդացէք մեր պայմանները

Դերբենդ. Ն. Յ. Քանի որ մեր պատերը այդքան անկանոն եւ անփոյթ են, անզօր ենք բողոքելու։ Բայց այն, որ շատ զգուշութեամբ պրում են կրկնակի արկղների մէջ, հասցէի պրելին էլ մակագրում ենք «խնդրում ենք զգոյշ լինել», սակայն մեր պատի ծառայողները անուշադիր են եւ անխնայ։

Բաթում. Մ. Ակ. Մենք ապառիկ բաժանորդագրութիւն չունենք։ Ձեր ուղարկած 2 ր. պէտք է յետ ստանաք խմբագր. գրասենեակից, որ բացի տօն եւ կիրակի օրերից, միշտ բաց է առաւօտեան ժ. 10—2½-ը։

Ղարս. Մկրտ. Օհ. Խոնարհաբար խնդրում ենք հաղորդել, թէ 96 թ. Աղբիւր-Տարագ դուք ինչ հասցէով էք եղել ստանում, որպէս զի մեզ ուղարկենք Ակբոմ-Ալմանախը։ Փոխանակ դատողութիւնների՝ նպատակայարմար է ուղղակի պրել պահանջը եւ հասչէն հաղորդել։

Պարիզ. Արշ. Ձ. Ձեր նամակները յանձնուած են պատկանելոյն։ Այդտեղ մենք արդէն ունենք մեր Թիֆլիսի պաշտօնական ներկայացուցիչ։

Ժբնեւ. Ար. Գ. Ո՞ւր է գտնւում այժմ պ. Խաժակը։ Եղբայրը վաղուց է նրանից լուր չունի։ Եթէ ուսանողութեանը յայտնի է նրա այժմեան հասցէն, Ձող մեզ հաղորդեն։

Կաղզւան. Հ. Խ. Ձեր նամակին պատասխանեցինք։

Տիեզերքի մէջ. Х. Ձեր ուղարկած 3 ր. ուղարկեցինք Սոլոլակի ծրի ճաշարանին, որը ստացական է ուղարկել մեզ №154։ Խմբագրութիւնս աւելի նպատակայարմար է համարում այդ տեսակ գումարներ ուղարկել այդ օպտակար հաստատութեան։ Այսուհետ հաբիւրաւոր հոգիք ամեն օր անդադար ճաշ են ստանում կամ բոլորովին ծրի եւ կամ համարեա ծրի (ճաշը 4 կ.)։

Գալով հայ փախստականներին, նրանց խնամում է եւ Հ. Ք. Ընկերութիւնը. եթէ դուք եւ Ձեզպէս շատերը անկեղծարար թշուառներին անյապաղ օգնութիւն էք կամենում հայթայթել, պէտք է ձեր լուման դնէք Հ. Ք. Ը. գանձանակի մէջ։

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ
Այսօր, կիրակի, յունւարի 12-ին
կը ներկայացնեն Դեմոն.
Երկուշաբթի—Կարմեն.

Թիֆլիսի ազնւականների Թատրոնում Չինգշաբթի, յունւարի 16-ին հայ պերասանական ընկերութիւնը կը ներկայացնէ երեք նոր պիեսներ յօգուտ

պ. Ա. Սարդարեան-Արեւշատեանի

I

ԾԱՆՕԹ ԱՆԾԱՆՕԹՆԵՐ

Կամ. մէկ գործ. փոխ. ռուերէնից Ա. Սարդարեան-Արեւշատեանի.

II

ԴԱՄՈԿԼԵԱՆ ՍՈՒՐ

դրամա (էտիւդ) երկու գործ. հեղ. Լ. Ֆին

Տէր-Գրիգորեանցի.

օր. Աշխէնի դերը կը կատարէ 6-ամեայ օր. Վ. Մելիքեանը.

III

ԴՈԿՏՈՐ ԹԱԹՈՒՍ

Կատակ վոդեվիլ մէկ գործ. հեղ. Իշ. Ձէեգլովի, փոխադր. Ա. Սարդարեան—Արեւշատեանի.

Սկիզբը 8 ժ. երեկոյեան։

1—1

Կ. Հ. Ռ. Ընկ. խորհուրդը յայտարարում է իւր գիտութիւն Տաճկաստանից փախած հայ գաղթականների, թէ բոլոր հիւանդ գաղթականները կարող են դիմել բժշկապետ Հագարաս Նաւասարդեանին, որ յանձն է առել ձրիաբար բժշկել նրանց, ամեն օր, (բացի կիւրակէից) առաւօտեան ժամի 11—12-ին իր հիւանդանոցում, ինչպէս եւ յանձն է առել այցելել նոյնպէս ձրիաբար, տանը պառկած հիւանդներին 5—1

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ք. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կաւկիա, Վրաստանի զբաղանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Ք. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.

ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԴՈՒՆԱՅԵՎԱ ԲՈՒԴՆԻՈ—10—11 ժ. կանանց և երեխ. հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ 12—1 ժ. ա. կանջի, կոկորդի, քթի և կրծքի հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—12—1 ժ. ներքին, երեխայոց և նեարդային հ. երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ։

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—5—6 ժ. երեքշ. հինգշ և շաբաթ։

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ. ներքին և մորթի հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշոբացուցական հետազոտութիւններ կ. առնում մէզի, խլխլ, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝

ԲԺշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Աղբիւր-Տարազի պրեմիաներն են՝ 1) *Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստուած մեծաղիր ֆոտօ-գլաւիւր պատկերը,* 2) *Մ'այրիկի ննջարանում, մի շքեղ խրոմօ,* 3) *Ոսկէ շղթաներում, կամ Հարեմի աղջիկը,* 4) *Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդեր, բացատրութիւններով։*

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը **3** ր. (արտասահման **4** ր. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆԸ **6** ր. (արտասահման **10** ր. կամ 30 ֆր.), ամսական *Տարազը* 50 կ. *Աղբիւրը*—25 կ. *պրեմիաները ստանում է Աղբիւր-Տարազ միւնհնոյն հասցեով գրող բաժանորդը վճարելով եւ մէկ ռուբլի։*
Հասցէն՝ Тифлисъ, редакція илюст. жур. Агбюръ-Тараз *կամ* Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.

Дозв. ценз. Тифлисъ, 11 января 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., д. № 1—2.